Մրցանակներ կհանձնվեն «Երևանյան ճարտարապետական Բիենալե-2014» մրցույթ-ցուցահանդեսի մասնակիցներին

Հոկտեմբերի 6-ին մեկնարկած «Երևանյան ճարտարապետական Բիենալե-2014» մրցույթ-ցուցահանդեսը նոյեմբերի 15-ին ժամը 12-ին ամփոփելու է արդյունքները:

Ցուցահանդեսի փակման և մրցանակների հանձնման պաշտոնական արարողությունը տեղի կունենա ՀՀ քաղաքաշինության նախարարության Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի սրահում (հասցե՝ ՀՀ կառավարական տուն 3, մուտքը՝ Հանրապետության հրապարակ մետրոյի կողմից):

Ամփոփելով մեկ ամսից ավել ներկայացված մրցույթ-ցուցահանդեսին ներկայացված նյութերը, ժյուրին կհայտարարի հաղթողների և մրցանակակիրների անունները:

Ի դեպ, ճարտարապետական բիենալեները Հայաստանում հետայսու կրելու են պարբերական բնույթ՝ անցկացվելով երկու տարին մեկ անգամ: